ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 09.11.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի

թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/81

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝

«Էյչէմէս» ՍՊԸ-ի տնօրեն Մ. Հարությունյանի (պետական գրանցման վկայականի համար՝ 286.110.869566),

«Էյչէմէս» ՍՊԸ-ի ներկայացուցիչ Ա. Հարությունյանի (լիազորագիր՝ տրված 01.11.2021թ.),

քննելով «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/84» ծածկագրով բաց մրցույթի շրջանակներում «Էյչէմէս» ՍՊԸ-ի ՍՊԸ-ի կողմից 26.10.2021թ. ներկայացված (27.10.2021թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2021/81 բողոք), պարզեցի հետևյալը.

1. **<u>«Էյչէմէս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>**

«Էյչէմէս» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 02.03.2021թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

««ԷՅՉԷՄԷՍ» ՍՊԸ-ի բողոքի առարկան, բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները և պահանջը.

Բողոքի առարկան՝ «ԷՅՉԷՄԷՍ» ՍՊԸ-ն ս/թ սեպտեմբերի 29-ին մասնակցել է «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/84 ծածկագրով բաց մրցույթի թիվ 12 չափաբաժնին: Ս/թ սեպտեմբերի 30-ին ժամը 13:09 Պատվիրատուի կողմից ստացվել է թիվ 3 արձանագրությունը, որում արձանագրվել է անհամապատասխանություն հավելված 1-ում կապված իրական շահառուների տեղեկատվության հետ: «ԷՅՉԷՄԷՍ» ՍՊԸ-ն հավելված 1-ում հղում է կատարել իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կայք էջին, որը Պատվիրատուն համարել է սխալ այն դեպքում, երբ պարզ չէ թե ինչ կայք էջի մասին է խոսքը, որևէ տեղ չի նշվում և մանրամասնվում դրա մասին, հրավերի շեղ տառերով բացատրական մասում նշվում է իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կայք էջը: Այստեղ դեռ հարց է սխալ է հղումը դրվել թե ոչ, քանի որ «ԷՅՉԷՄԷՍ» ՍՊԸ-ի իրական շահառուն գրանցված է հղումով ներկայացված կայքում: Սրանից բացի Պատվիրատուն սեպտեմբերի 30-ին ժամը 13:09 րոպեին արձանագրություն է ուղարկում մասնակցին նշելով՝ մասնակցին տալ օրենսդրությամբ նախատեսված հնարավորություն շտկելու անհամապատասխանությունը: Հաջորդ օրը հոկտեմբերի 1-ին ժամը՝ 12:57 «ԷՅՉԷՄԷՍ» ՍՊԸ-ն ուղարկել է Պատվիրատուին շտկված տարբերակը: Նույն օրը ժամը 15:53 Պատվիրատուից ստանում է թիվ 4 արձանագրությունը, որում նշվում է, որ Ընկերության հայտը մերժվում է սահմանված ժամկետում շտկումը չներկայացվելու պատճառով: Մասնակիցը ծանուցման ստացման ժամից շուտ է ներկայացրել շտկումը: Նշենք նաև, որ «ԷՅՉԷՄԷՍ» ՍՊԸ- ն ներկայացրել է 1000000 (մեկ միլիոն) պակաս գնառաջարկ, քան երկրորդ տեղ զբաղեցնող մասնակիցը:

Բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները Համաձայն 2017թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 41-րդ կետի՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի

հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Մասնակցի համար հիմք է ընդունվում ծանուցման ամսաթիվը, որից սկսված մեկ աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվել է շտկումը:

Հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 330-րդ հոդվածը՝ Ժամկետի վերջին օրը գործողություններ կատարելու կարգը: Այն է 1. Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը:

Սակայն, եթե այդ գործողությունը պետք է կատարվի կազմակերպությունում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ սահմանված կանոններով այդ կազմակերպությունում դադարեցվում են համապատասխան գործառնությունները:

2. Կապի կազմակերպությանը մինչև ժամկետի վերջին օրվա ժամը քսանչորսը տրված գրավոր դիմումները և ծանուցումները համարվում են ժամկետին տրված:

Բողոքի պահանջը

Ուստի ելնելով վերոգրյալից Ընկերությունը խնդրում է բողոքը քննող անձին համաձայն «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի.

1. դադարեցնել «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/84» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 01.10.2021թ. ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրության (որոշման) 1-ին կետերով կայացված «ԷՅՉԷՄԷՍ» ՍՊ ընկերության հայտը անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:

2. պարտավորեցնել Պատվիրատուի գնահատող հանձնաժողովին վերանայել իր դիրքորոշումը «ԷՅՉԷՄԷՍ» ՍՊ ընկերության հայտի գնահատման վերաբերյալ:

Ի լրումն արդեն իսկ մեր կողմից ներկայացրած բողոքում և դիրքրոշման մեջ տեղ գտած հիմնավորումներին, ցանկանում ենք ստորև ներկայացնել լրացուցիչ պատճառաբանություններ, որոնք ուղղակիորեն վկայում են այն, որ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Գնահատող հանձնաժողով) կողմից բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-2/84» ծածկագրով բաց մրցույթի գնահատման հանձնաժողովի

01.10.2021 թվականի ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացված բողոքաբերի հայտը անբավարար գնահատելու և այն մերժելու որոշումը ակնհայտ ապօրինի է:

Այսպես. Գնահատող հանձնաժողովի 30.09.2021 թվականի ժամը 12:00-ին տեղի ունեցած թիվ 3 նիստի արձանագրության համաձյան' նիստը կասեցվել է 1 աշխատանքային օրով՝ Բողոաբերին տալով հնարավորություն ներկայացնելու ընկերության իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը:

Հաջորդ նիստը նշանակվել է 01.10.2021 թվականի ժամը 12:00-ին: Այդ օրվա նիստի թիվ 4 արձանագության համաձայն՝ Բողոքաբերի հայտը գնահատվել է անբավարար և այն մերժել է, քանի որ սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջված շտկումը /տեղեկություններ իրական շահառուների վերաբերյա/: Մինչդեռ այդ տեղեկատվությունը Գնահատող հանձնաժողովին է ներկայացվել 01.10.2021 թվականի ժամը 12:57-ին:

Փաստորեն, Գնահատող հանձնաժողովը մեկ աշխատանքային օրվա հաշվարկը կատարել է 30.09.2021 թվականի ժամը 12:00-ից մինչև հաջորդ օրվա ժամը 12:00-ը տրամաբանությամբ: Նման մոտեցումն իհարկե սխալ է և ոչ իրավաչափ:

ՀՀ կառավարության 4 մայիսի 2017 թվականի N 526-Ն որոշման 41-րդ և 42 կետեր սահմանում են՝

41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնա-ատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման

բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2021/81 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հրավերի 8.8 և 8.9 կետերի համաձայն՝

8.8 Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմանբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկեերի ավարտը շտկել անհամապատասխանությունը..:

8.9 Եթե սույն հրավերի 8.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար..:

«Գնումների մասին» օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝

1. Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ մասի համաձայն՝ 7. Օրերով հաշվարկվող ժամկետը լրանում է այդ ժամկետի վերջին օրը:

Նույն օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:

2. Եթե այդ գործողությունը պետք է կատարվի որևէ կազմակերպությունում կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնում, ապա ժամկետը լրանում է այն ժամին, երբ այդ մարմնում կամ կազմակերպությունում սահմանված կանոններով դադարեցվում են համապատասխան գործառնությունները:

3. Մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված:

4. Եթե ժամկետի վերջին օրը ոչ աշխատանքային օր է, ապա ժամկետի ավարտի օր է համարվում դրան հաջորդող աշխատանքային օրը:

Վերլուծելով վերոգրյալ կարգավորումները և դրանք համադրելով գործի փաստերի հետ միանշանակ է, որ Բողոքաբերը Գնահատող հանձնաժողովին 01.10.2021 թվականին ժամը 12:57-ին ներկայացնելով իրական շահառուի վերաբերյալ տեղեկատվություն միանշանակ պահպանել է մեկ աշխատանքային օրում այդ տեղեկատվությունը ներկայացնելու գնման հրավերում նշված պահանջը, այսինքն, վերջինս առնվազն մինչև 01.10.2021 թվականի ժամը 24:00-ը հնարավորություն է ունեցել ներկայացնելու այդ տեղեկատվությունը, հետևապես Գնահատող հանձնաժողովի դիրքրոշումը այս մասով ոչ իրավաչափ է:

Հատկանշական է, որ համանման փաստակազմի շուրջ համանման դիրքրորոշում է հայտնել նաև Գնումների հետ կապված բոորոքներ քննող անձն իր 05.03.2021 թվականի թիվ ՍՑ-ԼՕ-2021/35 որոշմամբ:

Նման պայմաններում, փաստում ենք, որ Գնահատող հանջնաժողովի 4 արձանագրության 1-ին կետն անվավեր է, քանի որ այն հակասում է իր համեմատ ավելի բարձր իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերին:

Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալը ևս մեկ անգամ պնդում ենք մեր բողոքը և Գնումների հետ կապված բողոքներ քննող անձից

ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ

ա/ պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/84» ծածկագրով բաց մրցույթի գնահատման հանձնաժողովին ընդունելու որոշում «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-2/84» ծածկագրով բաց մրցույթի գնահատման հանձնաժողովի 01.10.2021 թվականի ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացրած բողոքաբերի հայտն անբավարար գնահատելու և այն մերժելու որոշումն անվավեր ճանաչելու որոշում:

բ/ պարտավորեցնել «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-2//84» ծածկագրով բաց մրցույթի գնահատման հանձնաժողովին ընդունելու որոշում «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-2//84» ծածկագրով բաց մրցույթի շրջանակում «ԷՅՉԷՄԷՍ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված թիվ 12 չափաբաժնի մասով հայտը բավարար գնահատելու մասին որոշում:

Ընկերության տնօրենը, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.11.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր և ներկայացուցչի մասնակցությունը, ովքեր պնդել են բողոքը:

<u>2. «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 28.10.2021թ. թիվ 08-452 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Ի պատասխան «ԷՅՉԷՄԷՍ» ՍՊԸ-ի կողմից ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/84 ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետև՝ Ընթացակարգ) վերաբերյալ 26.10.2021թ. ներկայացված ԳԲՔԱ-ՆԳ-2021/81 ծածկագրով բողոքի՝ հայտնում ենք հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին կետը սահմանում է հետևյալը.

«Հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են»:

ՀՀ Կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի (այսուհետև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝

«Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը: Եթե անհամապատասխանությունն արձանագրվել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեից ստացված տեղեկատվության հիման վրա, ապա մասնակցին ուղարկվող ծանուցմանը կցվում է նաև կոմիտեից ստացված տեղեկատվության բնօրինակից սկանավորված տարբերակը: Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները»:

Օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի 10-րդ կետով նախատեսված է, որ

«Արձանագրությունը պարունակում է՝

10) հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը.»

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի համաձայն

«Նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից»:

Ելնելով վերոնշյալ դրույթների բառացի մեկնաբանությունից ակնհայտ է դառնում հետևյալ քայլերի հերթականությունը.

1. հայտի գնահատման ժամանակ անհամապատասխանություն հայտանաբերելու դեպքում գնահատող հանձնաժողովը նիստը կասեցնում է մեկ աշխատանքային օրով, ընդ որում արձանագրության մեջ հստակ նշելով հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը, այսինքն 30.09.2021թ 12:00-ին գումարված նիստը կասեցվում է մինչև 01.10.2021թ ժամը 12:00-ն:

2. Նույն օրը, այսինքն՝ 30.09.2021թ-ին, հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին, ներկայացնելով արձանագրված անհամապատասխանությունները և առաջարկելով շտկել դրանք մինչև կասեցման ժամկետի ավարտը, այսինքն մինչև 01.10.2021թ ժամը 12:00-ն:

3. 01.10.2021թ ժամը 12:00-ին հանձնաժողովը վերսկսում է իր աշխատանքները, և իրականացնում հայտերի գնահատում, հաշվի առնելով ներկայացված շտկումների առկայությունը կամ բացակայությունը:

4. Մերժվում են հրավերի պահանջներին (տվյալ դեպքում ոչ գնային պայմաններին) չհամապատասխանող հայտերը և կազմակերպվում է գնային առաջարկերի նվազեցման շուրջ բանակցությունները (եթե այդպիսին նախատեսված է Օրենսդրությամբ):

ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/84 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը և հանձնաժողովի քարտուղարը իրենց գործառույթները կատարել են ամբողջությամբ, Օրենսդրությանը համապատասխան և ժամկետներում, ուստի գտնում ենք, որ բողոքը հիմնավոր չէ:

Կից ներկայացնում ենք համապատասխան նիստերի արձանագրությունների պատճենները և էլ. փոստից քաղվածք»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 01.11.2021թ. ժամը 10:10-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը նիստին:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2021/81 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2020/81 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1.«Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/84» ծածկագրով բաց մրցույթ (հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էյչէմէս» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Էյչէմէս» ՍՊԸ-ն Հավելված 1-ում իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը ներկայացրել է կայքի հետևյալ հղմամբ՝ www-e-register.am/companies/1252667, սակայն այն իրական շահառուների մասով տեղեկություններ չի պարունակում կամ առնվազն հասանելի չեն:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու՝ «Էյչէմէս» ՍՊԸ-ին հնարավորություն տալու շտկելու անհամապատասխանությունը և 01.10.2021թ. ժամը 12:00-ին նույն վայրում շարունակելու վերաբերյալ:

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 30.09.2021թ. ժամը 13:09-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ կցելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը:

5. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.10.2021թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել է, որ «Էյչէմէս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջված շտկումը և որոշում է կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

4. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Էյչէմէս» ՍՊԸ-ի կողմից 26.10.2021թ. ներկայացված բողոքը, «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի 28.10.2021թ. թիվ 08-452 գրությունը և գործում առկա փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Այսպիսով՝ «Նորք-Մարաշ բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի կողմից իր կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՆՄԲԿ-ԲՄԱՊՁԲ-21/84» ծածկագրով բաց մրցույթ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Էյչէմէս» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Էյչէմէս» ՍՊԸ-ն Հավելված 1-ում իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունը ներկայացրել է կայքի հետևյալ հղմամբ՝ www-e-register.am/companies/1252667, սակայն այն իրական շահառուների մասով տեղեկություններ չի պարունակում կամ առնվազն հասանելի չեն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը նույն արձանագրությամբ որոշում է կայացրել նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնելու՝ «Էյչէմէս» ՍՊԸ-ին հնարավորություն տալու շտկելու անհամապատասխանությունը և 01.10.2021թ. ժամը 12:00-ին նույն վայրում շարունակելու վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղարը 30.09.2021թ. ժամը 13:09-ին էլեկտրոնային եղանակով ծանուցել է Ընկերությանը՝ կցելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 30.09.2021թ. նիստի թիվ 3 արձանագրությունը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 01.10.2021թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովն արձանագրել

է, որ «Էյչէմէս» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում չի ներկայացրել պահանջված շտկումը և որոշում է կայացրել վերջինիս հայտը մերժելու վերաբերյալ:

Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 327-րդ հոդվածի համաձայն՝ ժամանակահատվածով որոշվող ժամկետն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա և ամսաթվի կամ այն իրադարձության վրա հասնելու հաջորդ օրվանից, որով որոշված է ժամկետի սկիզբը:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տարիներով, ամիսներով կամ օրերով հաշվարկվող ժամկետների ընթացքն սկսվում է այն օրացուցային տարվա, ամսվա, ամսաթվի կամ վրա հասած իրադարձությանը հաջորդ օրվանից, որով որոշված է դրա ժամկետի սկիզբը:

Նույն օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ եթե ժամկետը սահմանվել է որևէ գործողություն կատարելու համար, ապա այդ գործողությունը կարող է կատարվել մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը ***մեկ աշխատանքային օրով*** կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե ***սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում*** մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է...:

Այսպիսով՝ վերոնշված իրավակարգավորումների հաշվառմամբ գտնում եմ, որ տվյալ դեպքում գնահատող հանձնաժողովը, Ընկերությանն անհամապատասխանության շտկման վերաբերյալ ծանուցումը ***30.09.2021թ. ժամը 13:09-ին*** ուղարկելու պայմաններում ***01.10.2021թ. ժամը 12:00-ին*** կազմակերպված գնահատող հանձնաժողովի նիստին

«Էյչէմէս» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելով և մերժելով՝ պահանջված շտկումը չներկայացնելու հիմքով, գործել է ոչ իրավաչափ՝ զրկելով Ընկերությանը Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում իր իրավունքի իրացման հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ արձանագրում եմ, որ գնահատող հանձնաժողովը չի պահպանել Կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետը, որպիսի պայմաններում գտնում եմ, որ «Էյչէմէս» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Միևնույն ժամանակ արձանագրում եմ, որ Պատվիրատուն կրկին պետք է կիրառի Կարգի 41-րդ կետով սահմանված պահանջը՝ հնարավորություն տալով Ընկերությանը մեկ աշխատանքային օրում շտկելու արձանագրված անհամապատասխանությունը, որից վերջինս զրկվել էր գնահատող հանձնաժողովի նիստի թիվ 4 արձանագրությամբ կայացված որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

«Էյչէմէս» ՍՊԸ-ի կողմից 26.10.2021թ. ներկայացված բողոքը բավարարել մասնակի.

1. Պարտավորեցնել Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 01.10.2021թ. ժամը 12:00-ի թիվ 4 արձանագրության 1-ին կետով կայացված «Էյչէմէս» ՍՊԸ-ի հայտն անբավարար գնահատելու և մերժելու մասին որոշումը:
2. Բողոքի պահանջը մնացած մասով մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**